

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղրղզստանի
Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցություն հաստատելու
մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ղրղզստանի
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

լինելով 1944 թվականի դեկտեմբերի 7-ին ստորագրման համար Չիկագոյում
բացված Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիայի
մասնակիցներ,

ընդունելով օդային տրանսպորտի՝ որպես երկու երկրների ժողովուրդների
միջև բարեկամության, փոխըմբռնման ու համագործակցության հաստատման և
պահպանման միջոցի կարևորությունը,

Հայաստանի և Ղրղզստանի միջև միջազգային համագործակցության
շարունակման և զարգացման նպատակով,

ցանկանալով կնքել Համաձայնագիր Պայմանավորվող կողմերի
պետությունների տարածքների միջև ու դրանց սահմաններից դուրս օդային
հաղորդակցության հաստատման մասին,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1 Տերմինների սահմանումը

1. Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման նպատակով, եթե
տեքստում այլ կերպ սահմանված չէ.

ա) «Կոնվենցիա» տերմինը նշանակում է 1944 թվականի դեկտեմբերի 7-ից
ստորագրման համար Չիկագոյում բացված Միջազգային քաղաքացիական
ավիացիայի մասին Կոնվենցիան և ներառում է այդ Կոնվենցիայի ցանկացած
հավելված՝ այնքանով, որքանով նման հավելվածն ու դրա ուղղումը կիրառելի են
սույն Համաձայնագրի Պայմանավորվող կողմերի համար, և Կոնվենցիայի
ցանկացած ուղղում, որը ընդունվել է Կոնվենցիայի 94-րդ հոդվածի համաձայն և
վավերացվել է, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության և
Ղրղզստանի Հանրապետության կողմից,

բ) «ավիացիոն իշխանություններ» տերմինը նշանակում է.

Ղրղզստանի Հանրապետության նկատմամբ՝ տրանսպորտի և
հաղորդակցության նախարարությունը և օդային տրանսպորտի և օդային տարածքի
օգտագործման ղեկարարամենտը կամ ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը
լիազորված է իրականացնելու ներկայումս այդ նախարարության կողմից կատարվող
գործառնությունները,

Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ տրանսպորտի
նախարարությունը կամ Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը կամ
ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը լիազորված է իրականացնելու
ներկայումս այդ նախարարության կողմից կատարվող գործառնությունները,

գ) «Նշանակված ավիաձեռնարկություն» տերմինը նշանակում է՝
ավիաձեռնարկություն, որը նշանակվել և լիազորվել է սույն Համաձայնագրի 3-րդ
հոդվածին համապատասխան,

դ) «տարածք» տերմինը պետության նկատմամբ նշանակում է երկրային մակերևույթը, տարածքային և ներքին ջրերը և դրանց վրայի օդային տարածքը, որոնք գտնվում են այդ պետության ինքնիշխանության ներքո,

ե) «օդային հաղորդակցություն», «միջազգային օդային հաղորդակցություն», «ավիաձեռնարկություն» և «ոչ առևտրային նպատակներով կանգառ» տերմիններն ունեն Կոնվենցիայի 96-րդ հոդվածում նշված նշանակությունները,

զ) «Համաձայնագիր» տերմինը նշանակում է սույն Համաձայնագիրը՝ ներառյալ հավելվածն ու դրա ցանկացած ուղղումը,

է) «սահմանված երթուղիներ» տերմինը նշանակում է երթուղիներ, որոնք սահմանված են կամ ենթակա են սահմանման սույն Համաձայնագրի հավելվածում,

ը) «պայմանագրային չվագծեր» տերմինը նշանակում է միջազգային ավիագծեր, որոնք շահագործվում են սահմանված երթուղիներով սույն Համաձայնագրի հավելվածին համապատասխան,

թ) «ասկազին» տերմինը նշանակում է ուղևորների, ուղեբեռի և բեռների փոխադրման վարձի արժեքը և այդ վարձի գլխձման պայմանները, ներառյալ գործակալական և այլ լրացուցիչ ծառայությունների վճարման գումարն ու պայմանները, բայց բացառելով փոստի փոխադրման վարձն ու պայմանները,

ժ) «տարողություն» տերմինը «պայմանագրային չվագծերի» նկատմամբ նշանակում է այդ չվագծերում օգտագործվող օդանավի տարողությունը՝ բազմապատկած որոշակի ժամանակամիջոցում ամբողջ երթուղում կամ երթուղու մի մասում այդ օդանավի կատարած թռիչքների հաճախականությամբ:

Հոդված 2

Իրավունքների տրամադրում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին ընձեռում է սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքներ՝ սույն Համաձայնագրի հավելվածում նշված երթուղիներով կանոնավոր միջազգային հաղորդակցություն իրականացնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր պայմանավորվող կողմի նշանակած ավիաձեռնարկությունը սահմանված երթուղով պայմանագրային չվագիծը շահագործելիս կօգտվի հետևյալ իրավունքներից.

ա) անվայրէջք թռչել մյուս Պայմանավորվող կողմի տարածքով,

բ) մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ոչ առևտրային նպատակով վայրէջք կատարել սույն Համաձայնագրի հավելվածում նշված կետերում,

գ) մյուս Պայմանավորվող կողմի տարածքում վայրէջք կատարել սույն Համաձայնագրի հավելվածում նշված կետերում՝ միջազգային ուղղություններով մեկնող ուղևորների, փոստի և բեռների բեռնման և (կամ) բեռնաթափման նպատակով:

3. Սույն հոդվածում ոչինչ չպետք է դիտվի որպես Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաձեռնարկությանը մյուս Պայմանավորվող կողմի տարածքի կետերի միջև փոխադրման համար, վարձատրության կամ վարձակալման պայմաններով ուղևորներ, փոստ և բեռներ օդանավ վերցնելու իրավունքների ընձեռում:

4. Պայմանագրային չվագծերով օդանավերի թռիչքների երթուղիները և պետական սահմանների չվանցման կետերը սահմանում է յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ՝ իր տարածքում:

5. Պայմանագրային չվագներում օդանավերի, բոիչքներին և ուղևորների, բեռների ու փոստի փոխադրումներին, երկրի վրա օդանավերի տեխնիկական սպասարկմանը և ֆինանսական հաշվարկների կարգին վերաբերող տեխնիկական և առևտրային հարցերը կլուծվեն նշանակված ավիաձեռնարկությունների միջև պայմանավորվածությամբ և կներկայացվեն Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հավանությամբ:

Հոդված 3

Ավիաձեռնարկության նշանակումը և շահագործման բույլտվության տրամադրումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա սահմանված երթուղիներով պայմանագրային չվագների շահագործման նպատակով նշանակել ավիաձեռնարկություն(ներ)՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Պայմանավորվող կողմին:

2. Նման ծանուցում ստանալով՝ մյուս Պայմանավորվող կողմը, սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթներին համապատասխան, յուրաքանչյուր նշանակված ավիաձեռնարկության անհապաղ կրճեռի բոիչքների համապատասխան բույլտվություն:

3. Մինչև բոիչքների բույլտվության ընձեռումը Պայմանավորվող կողմերից մեկի ավիացիոն իշխանությունները մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաձեռնարկությունից կարող են պահանջել այն բանի ապացույցներ, որ վերջինս ունակ է կատարելու միջազգային չվագները շահագործելիս այդ իշխանությունների կողմից սովորաբար կիրառվող օրենքներով ու կանոններով և Կոնվենցիայի դրույթներով նախատեսված պայմանները:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա մերժելու սույն հոդվածի 2-րդ կետով նշված բոիչքների բույլտվության տրամադրումը կամ պահանջելու այնպիսի պայմանների կատարում, որոնք նա անհրաժեշտ կհամարի նշանակված ավիաձեռնարկության կողմից սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում հիշատակված իրավունքները օգտագործելիս, բոլոր դեպքերում, երբ հիշատակված Պայմանավորվող կողմը չունի այն բանի ապացույցները, որ այդ ավիաձեռնարկության առավելագույն տիրապետումն ու իրական վերահսկողությունը պատկանում են այդ ավիաձեռնարկությանը նշանակված Պայմանավորվող կողմին կամ նրա պետության քաղաքացիներին:

5. Նշանակված և այդպիսով բույլտվություն ստացած ավիաձեռնարկությունը կարող է սկսել պայմանագրային չվագների շահագործումը՝ պայմանով, որ նշանակված ավիաձեռնարկությունների միջև համաձայնեցված բոիչքների չվացուցակը հաստատված է Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների կողմից, և սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի դրույթներին համապատասխան սահմանված սակագները գործողության մեջ են դրված:

Հոդված 4

Թոիչքների բույլտվության անվավեր ճանաչումը կամ դադարեցումը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա անվավեր ճանաչելու բոիչքների բույլտվությունը կամ էլ դադարեցնելու սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում նշված այն իրավունքներից օգտվելը, որոնք տրամադրվել են մյուս Պայմանավորվող կողմի նշանակված

ավիաձեռնարկությանը, կամ էլ պահանջելու այնպիսի պայմանների կատարում, որոնք նա անհրաժեշտ կհամարի մնալ իրավունքներից օգտվելիս:

ա) այն բոլոր դեպքերում, երբ նա համոզված չէ, որ ավիաձեռնարկության առավելագույն տիրապետումը կամ իրական վերահսկողությունը պատկանում է այդ ավիաձեռնարկությանը նշանակած Պայմանավորվող կողմին կամ նրա քաղաքացիներին, կամ

բ) այն դեպքում, եթե այդ ավիաձեռնարկությունը չի պահպանում այդ իրավունքներն ընձեռող Պայմանավորվող կողմի օրենքներն ու կանոնները, կամ

գ) այն դեպքում, եթե ավիաձեռնարկությունը որևէ այլ կերպ չի պահպանում սույն Համաձայնագրով նախատեսված պայմանները:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմանների անհապաղ անվավեր ճանաչումը, դադարեցումը կամ կատարման պահանջը անհրաժեշտ չեն օրենքների և կանոնների հետագա խախտումները կանխարգելելու համար, ապա այդ կետում հիշատակված իրավունքը կօգտագործվի միայն Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև խորհրդակցություններից հետո, որոնք պետք է տեղի ունենան հարցման օրվանից հնարավորինս կարճ ժամկետում:

Հոդված 5

Մաքսատուրքերից և վճարումներից ազատումը

1. Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաձեռնարկության պայմանագրային չվագծերում շահագործվող օդանավերը, ինչպես նաև դրանց հաշվեցուցակային գույքը, վառելիքի պաշարները, և քսանյութերը, այդ օդանավերում գտնվող պաշարները (ներառյալ սննդամթերքը, խմիչքը և ծխախոտը) մյուս Պայմանավորվող կողմի տարածք ժամանելիս կազատվեն բոլոր մաքսատուրքերից և մնալ այլ վճարումներից՝ պայմանով, որ այդ գույքը, նյութերը և պաշարները կմնան օդանավում մինչև հետ տարվելը:

2. Բացառությամբ մատուցված ծառայությունների դիմաց վճարումների, մնալ տուրքերից և վճարումների կազատվեն նաև.

ա) Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում վերցված և մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաձեռնարկության պայմանագրային չվագծերում շահագործվող օդանավում օգտագործելու համար նախատեսված օդանավային պաշարները,

բ) Պայմանավորվող կողմերից մեկի տարածք ներմուծված՝ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաձեռնարկության պայմանագրային չվագծերում շահագործվող օդանավի տեխնիկական սպասարկման կամ նորոգման համար պահեստամասերը,

գ) Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաձեռնարկության պայմանագրային չվագծերում շահագործվող օդանավի օգտագործման համար նախատեսված վառելիքը և քսանյութերը, եթե նույնիսկ այդ պաշարներն օգտագործվեն մյուս Պայմանավորվող կողմի տարածքի սահմաններում գտնվող երթուղու հատվածում, որտեղ դրանք վերցվել են օդանավ,

դ) Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաձեռնարկությունների կողմից օգտագործվող փաստաթղթերը, ներառյալ ավիատոմսերը, ավիակարգագրերը, ինչպես նաև մյուս Պայմանավորվող կողմի տարածքում անվճար տարածվող գովազդային նյութերը:

3. Նյութերը, պաշարները և պահեստամասերը, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ կետում նշված գույքը, սարքավորումները և փաստաթղթերն ըստ

պահանջի կարող են դրվել մաքսային իշխանությունների հսկողության կամ ստուգման տակ:

4. Հաշվեցուցակային գույքը, նյութերը, պաշարներն ու պահեստամասերը, որոնք գտնվում են Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաձեռնարկության պայմանագրային չվագձեռնում շահագործվող օդանավում, կարող են բեռնաթափվել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում միայն այդ Պայմանավորվող կողմի մաքսային իշխանությունների համաձայնությամբ: Այս դեպքում դրանք կարող են դրվել հիշյալ իշխանությունների հսկողության ներքո մինչև այն պահը, քանի դեռ դրանք հետ չեն տարվի և, Պայմանավորվող կողմերի մաքսային կանոններին համապատասխան, այլ նշանակություն չեն ստանա:

5. Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված տուրքերից և վճարումներից ազատումը կկիրառվի նաև այն դեպքերում, երբ Պայմանավորվող կողմերից մեկի ավիաձեռնարկությունը մեկ այլ ավիաձեռնարկության հետ պայմանագիր է կնքել սույն հոդվածի 1-ին կետում նշված գույքի ժամանակավոր օգտագործման կամ փոխանցման մասին պայմանով, որ այդ մյուս ավիաձեռնարկությունը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում օգտվում է տուրքերից ու վճարումներից ազատվելու նույնպիսի իրավունքից:

Հոդված 6 Սակագներ

1. Պայմանավորվող կողմերից մեկի ավիաձեռնարկությունների կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքից կամ նրա տարածք փոխադրելու համար գանձվող սակագները պետք է սահմանվեն խելամիտ չափով՝ հաշվի առնելով բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ շահագործման ծախսերը, խելամիտ շահույթը և մյուս ավիաձեռնարկությունների սակագները: Պայմանավորվող կողմերը որպես անընդունելի կդիտեն այն սակագները, որոնք անտրամաբանական բարձր կամ սահմանափակող են գերիշխող դրության չարաշահման պատճառով, ինչպես նաև ավիաձեռնարկություններին այնպիսի զներից պաշտպանելու նպատակով, որոնք արհեստականորեն իջեցված են պետական ուղղակի կամ անուղղակի դրամական օժանդակությունների հաշվին կամ էլ այն խտրական զների կանխման ու սպառողներին զներից պաշտպանելու պրակտիկային աջակցության նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված սակագները պետք է համաձայնեցվեն երկու Պայմանավորվող կողմերի ավիաձեռնարկությունների միջև, և նման համաձայնեցումը ձեռք կբերվի Օդային տրանսպորտի միջազգային ընկերակցության սակագների հաստատման մեխանիզմի օգտագործմամբ:

3. Նման ձևով համաձայնեցված սակագները երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատմանը կներկայացվեն դրանց ուժի մեջ մտնելու ենթադրյալ ժամկետից առնվազն քառասունհինգ (45) օր առաջ: Հատուկ դեպքերում այդ ժամկետը կարող է կրճատվել նշված իշխանությունների պայմանավորվածությամբ:

4. Կիրառման համաձայնությունը կարող է տրվել կոնկրետ պատասխանի միջոցով: Եթե համապատասխան ավիացիոն իշխանությունները սակագների ներկայացման պահից երեսուն (30) օրվա ընթացքում սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան իրենց անհամաձայնությունը չարտահայտեն դրանց վերաբերյալ, սակագները կհամարվեն հաստատված: Եթե 3-րդ կետով նախատեսված համաձայնեցման ժամանակամիջոցը կրճատվում է, ապա

ավիացիոն իշխանությունները կարող են պայմանավորվել, որ չհամաձայնելու մասին ծանուցման ժամկետը լինի երեսուն օրից պակաս:

5. Եթե հաստատման ներկայացված սակագինը չի կարող համաձայնեցվել սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան, կամ եթե սույն հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետում Պայմանավորվող կողմերից մեկի ավիացիոն իշխանությունները ծանուցեն մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններին սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան որևէ համաձայնեցված սակագնի վերաբերյալ իրենց անհամաձայնության մասին, ապա երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունները պետք է փորձեն նման սակագին սահմանել միմյանց միջև փոխադարձ պայմանավորվածությամբ:

6. Եթե ավիացիոն իշխանությունները չկարողանան պայմանավորվել սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ներկայացված ցանկացած սակագնի կամ սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան ցանկացած սակագնի սահմանման շուրջ, ապա տարաձայնությունները պետք է կարգավորվեն սույն Համաձայնագրի 18-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

7. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան սահմանված սակագինը պետք է ուժի մեջ մնա այնքան ժամանակ, քանի դեռ չի հաստատվել նոր սակագինը:

8. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի ավիացիոն իշխանությունները բոլոր ջանքերը կգործադրեն, որպեսզի նշանակված ավիաձեռնարկությունները հետևեն Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատած համաձայնեցված սակագներին, և որպեսզի ավիաձեռնարկություններից ոչ մեկը ուղղակի կամ անուղղակի, առանց ավիացիոն իշխանությունների հաստատման այդ սակագների որևէ զեղչ չտրամադրի, որը կարող է տրվել ընդհանուր հիմունքներով կամ որևէ հատուկ դեպքում կամ մի շարք այլ դեպքերում:

Հոդված 7

Ներկայացուցչություն

1. Պայմանավորվող կողմերից մեկի նշանակված ավիաձեռնարկությանը փոխադարձության հիման վրա թույլ կտրվի մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պահել ներկայացուցիչներ և առևտրային, օպերատիվ ու տեխնիկական անձնակազմ, որն անհրաժեշտ է պայմանագրային չվագների շահագործման համար: Վերոհիշյալ անձնակազմը պետք է բաղկացած լինի Պայմանավորվող կողմերի քաղաքացիներից:

2. Նման անձնակազմին ներկայացվող պահանջները, նշանակված ավիաձեռնարկության ցանկությամբ, կարող են բավարարվել սեփական անձնակազմի հաշվին կամ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գործող և այդ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում նման ծառայություններ մատուցելու համար լիազորված կազմակերպությունների, ընկերությունների կամ ավիաընկերությունների ծառայությունների օգտագործման միջոցով:

3. Ներկայացուցիչների և անձնակազմի վրա տարածվում են այն Պայմանավորվող կողմի գործող օրենքներն ու կանոնները, որի տարածքում դրանք գտնվում են, և, այդ օրենքներին ու կանոններին համապատասխան, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ փոխադարձության հիման վրա և նվազագույն հապաղումով կտրամադրի աշխատանքի անհրաժեշտ թույլտվություններ, աշխատանքի տեղավորման համար այցագրեր կամ նման

կարգի այլ փաստաթղթեր այն ներկայացուցիչներին և անձնակազմին, որոնց մասին հիշատակված է սույն հոդվածի 1-ին կետում:

Հոդված 8

Օրենքների և կանոնների կիրառում

1. Պայմանավորվող կողմերից մեկի օրենքներն ու կանոնները, որոնք կարգավորում են իր տարածքում միջազգային թռիչքներ կատարող օդանավերի ժամանումն ու մեկնումը, կամ իր տարածքի սահմաններում այդ օդանավերի գտնվելու ժամանակ դրանց շահագործումը կամ օդազնագությունը, կկիրառվեն մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաձեռնարկության օդանավերի նկատմամբ:

2. Պայմանավորվող կողմերից մեկի օրենքներն ու կանոնները, որոնք կարգավորում են իր տարածքում ուղևորների, անձնակազմերի ժամանումն ու մեկնումը, ուղեբեռի, բեռների ու փոստի ստացումն ու առաքումը և, մասնավորապես, անձնագրային, մաքսային, արժույթային ու սանիտարական կանոններին վերաբերող ձևականությունները, կկիրառվեն մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաձեռնարկության օդանավերի ուղևորների, անձնակազմերի, բեռների և փոստի նկատմամբ՝ նշված տարածքի սահմաններում դրանց գտնվելու ժամանակ:

Հոդված 9

Վկայագրերի և վկայականների ճանաչումը

1. Թռիչքների պիտանության վկայագրերը, որակավորման վկայականներն ու Պայմանավորվող կողմերից մեկի տված կամ վավերական ճանաչած վկայագրերը վավերական կճանաչվեն մյուս Պայմանավորվող կողմի կողմից՝ սահմանված երթուղիներում պայմանագրային չվագծերով թռիչքներ կատարելու համար՝ պայմանով, որ տրված կամ վավերական ճանաչված այդպիսի վկայագրերն ու վկայականները համապատասխանեն Կոնվենցիայով սահմանված ստանդարտներին, և որ դրանց գործողության ժամկետը լրացած չլինի:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն իրեն իրավունք է վերապահում հրաժարվելու վավերական ճանաչել իր պետության քաղաքացիներին մյուս Պայմանավորվող կողմի տված որակավորման վկայականներն ու վկայագրերը՝ իր պետության տարածքի վրայով թռիչքներ կատարելիս:

Հոդված 10

Ավիացիոն անվտանգությունը

1. Պայմանավորվող կողմերը հաստատում են անօրինական միջամտության գործողություններից քաղաքացիական ավիացիայի անվտանգությունը պաշտպանելու՝ միմյանց նկատմամբ ստանձնած պարտավորությունները: Պայմանավորվող կողմերը գործում են Օդանավերում կատարվող հանցագործությունների և որոշ այլ գործողությունների մասին 1963 թվականի սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված Կոնվենցիայի, Օդանավերի ապօրինի զավթման դեմ պայքարի մասին 1970 թվականի դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված Կոնվենցիայի, Քաղաքացիական

ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին 1971 թվականի սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված Կոնվենցիայի և Միջազգային օդանավակայաններում բռնության անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին 1988 թվականի փետրվարի 24-ին Մոնրեալում ստորագրված Արձանագրության դրույթներին համապատասխան:

2. Պայմանավորվող կողմերը, ըստ խնդրանքի, միմյանց ցուցաբերում են բոլոր անհրաժեշտ օգնությունը օդանավերի անօրինական զավթումը և օդանավերի, դրանց ուղևորների ու անձնակազմերի, օդանավակայանների և օդագնացության միջոցների դեմ ուղղված այլ անօրինական գործողությունները, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի անվտանգության ցանկացած այլ սպառնալիք կանխելու նպատակով:

3. Պայմանավորվող կողմերը գործում են Զաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության սահմանած և Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Կոնվենցիայի հավելվածներով նախատեսված ավիացիոն անվտանգության դրույթներին և տեխնիկական պահանջներին համապատասխան՝ այնքանով, որքանով նման դրույթները և պահանջները կիրառելի են Պայմանավորվող կողմերի նկատմամբ. նրանք կպահանջեն, որ իրենց զրանցմամբ օդանավեր շահագործողները, որոնց գործունեության հիմնական վայրը կամ մշտական գտնվելու վայրը գտնվում է իրենց տարածքում, և իրենց տարածքում միջազգային օդանավակայաններ շահագործողները գործեն ավիացիոն անվտանգության այդ դրույթներին ու պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայն է, որ մյուս Պայմանավորվող կողմը կարող է օդանավերի այդ շահագործողներից պահանջել կատարելու սույն հոդվածի 3-րդ կետում հիշատակված ավիացիոն անվտանգության դրույթներն ու պահանջները, որոնք այդ մյուս Պայմանավորվող կողմը նախատեսում է իր տարածքի սահմաններ մուտքի, ելքի և գտնվելու համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքի սահմաններում կապահովի պատշաճ միջոցների կիրառում մինչև վայրէջքը ու վայրէջքի ժամանակ և մինչև բեռնումն ու բեռնման ժամանակ օդանավերի պաշտպանության և ուղևորների, անձնակազմի, ձեռնածանրոցների, ուղեբեռների, բեռների և օդանավի պաշարների ստուգման համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նաև բարյացակամորեն է ընդունում կոնկրետ սպառնալիքի առնչությամբ անվտանգության հատուկ միջոցներ ձեռնարկելու մյուս Պայմանավորվող կողմի ամեն մի խնդրանք:

5. Երբ առկա է քաղաքացիական օդանավերի ապօրինի զավթման կամ օդանավերի, դրանց ուղևորների ու անձնակազմերի, օդանավակայանների կամ օդագնացության միջոցների անվտանգության դեմ այլ անօրինական գործողությունների հետ կապված միջադեպ կամ միջադեպի սպառնալիք, Պայմանավորվող կողմերը միմյանց օգնություն ցույց կտան կապի դյուրացման և համապատասխան միջոցների ձեռնարկման միջոցով՝ նման միջադեպի կամ վերջինիս սպառնալիքի արագ և անվտանգ խափանման նպատակով:

Հոդված 11

Հաշվարկներ, եկամուտների փոխանցում և փոխադրումների վաճառք

1. Նշանակված ավիաձեռնարկությունների միջև հաշվարկները կկատարվեն Պայմանավորվող կողմերի միջև գործող հաշվարկներին և վճարումների մասին համաձայնագրերին համապատասխան:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաձեռնարկությանը իրավունք է ընձեռում ազատ փոխանցելու ծախսերը գերազանցող եկամուտների գումարները, որոնք այդ ավիաձեռնարկությունն ստացել է պայմանագրային չվագների շահագործումից:

3. Նման փոխանցումը պետք է կատարվի Պայմանավորվող կողմերի միջև ֆինանսական հարաբերությունները կարգավորող համաձայնագրի դրույթներին համապատասխան: Նման համաձայնագրի կամ այդ համաձայնագրում համապատասխան դրույթների բացակայության դեպքում փոխանցումը պետք է իրականացվի ազատ փոխարկելի արժույթով, պաշտոնական փոխարժեքով՝ Պայմանավորվող կողմերի կողմից կիրառվող արժութային փոխանակման կանոններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաձեռնարկությունը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կարող է ավիափոխադրումների վաճառք իրականացնել անմիջականորեն կամ իր նշանակած գործակալների միջոցով՝ այդ մյուս Պայմանավորվող կողմի օրենքներին կամ կանոններին համապատասխան:

Հոդված 12

Հարկերից ազատումը

Նշանակված ավիաձեռնարկությունների կողմից օդային փոխադրումներից ստացված եկամուտների հարկման նկատմամբ կկիրառվեն Պայմանավորվող կողմերի ազգային օրենսդրության դրույթները: Եթե Պայմանավորվող կողմերի պետությունների միջև գործի եկամուտների և գույքի կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագիր, ապա կկիրառվեն այդ համաձայնագրի դրույթները:

Հոդված 13

Թռիչքների տարողություններն ու չվացուցակը

1. Պայմանավորվող կողմերի նշանակած ավիաձեռնարկություններին կտրամադրվեն իրենց համապատասխան տարածքների միջև սահմանված երթուղիներով պայմանագրային չվագների շահագործման արդարացի և հավասար պայմաններ:

2. Պայմանագրային չվագները շահագործելիս Պայմանավորվող կողմերից մեկի նշանակած ավիաձեռնարկությունը պետք է նկատի առնի մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաձեռնարկության շահերը, որպեսզի վնաս չհասցնի վերջին ավիաձեռնարկության փոխադրումներին, որն ավիագիծ է շահագործում այդ երթուղով կամ դրա մի մասով:

3. Պայմանավորվող կողմերի նշանակած ավիաձեռնարկությունների շահագործվող պայմանագրային չվագները պետք է համապատասխանեն սահմանված երթուղիներով փոխադրումների հասարակական պահանջումներին, և յուրաքանչյուր ավիաձեռնարկություն պետք է առաջնահերթ խնդիր ունենա՝ տրամադրելու այնպիսի տարողություն, որը, բեռնման խելամիտ գործակցով հանդերձ, կհամապատասխանի իրենց համապատասխան տարածքների միջև ուղևորների, բեռների և փոստի փոխադրումների՝ գոյություն ունեցող և խելամտորեն ենթադրվող պահանջներին:

4. Սահմանված երթուղիներում տարողությունները պետք է սկզբունքորեն հավասար բաժանվեն Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի նշանակած

ավիաձեռնարկությունների միջև, եթե Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև այլ համաձայնություն չի մնի:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաձեռնարկությունը պետք է ոչ ուշ, քան թռիչքներն սկսվելուց 60 (վաթսուն) օր առաջ մյուս Պայմանավորվող կողմի հաստատմանը ներկայանի ենթադրվող չվացուցակը՝ նշելով թռիչքների հաճախականությունը, օդանավի տիպը, հորինվածքը և վաճառքի համար ենթադրվող տեղերի թիվը:

6. Այն դեպքում, եթե նշանակված ավիաձեռնարկությունները չեն կարող պայմանավորվածության հասնել թռիչքների չվացուցակի համաձայնեցման շուրջ, այդ հարցն անմիջականորեն կլուծվի Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև:

7. Թռիչքների չվացուցակը չի կարող գործողության մեջ դրվել առանց Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատման: Հաստատված չվացուցակում հետագա ցանկացած փոփոխություն պետք է ներկայացվի Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատմանը:

Հոդված 14

Սպասարկման միջոցները և վճարները

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է սահմանել կամ բույլ տալ սահմանել արդար և խելամիտ վճարներ՝ օդանավակայաններից և մյուս ավիացիոն միջոցներից օգտվելու դիմաց՝ պայմանով, որ այդ վճարները չեն գերազանցի նման միջազգային օդային հաղորդակցություն իրականացնող այլ ավիաձեռնարկությունների կողմից գանձվող վճարները:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կնպաստի իր՝ վճարներ գանձող իրավասու մարմինների և ծառայություններից ու միջոցներից օգտվող նշանակված ավիաձեռնարկությունների միջև խորհրդակցությունների անցկացմանը, որտեղ գործնականում հնարավոր է, ավիաձեռնարկություններ ներկայացնող կազմակերպությունների միջոցով: Օգտագործողներին պետք է վաղօրոք ծանուցում տրվի կիրառվող վճարների փոփոխության մասին ցանկացած առաջարկի վերաբերյալ, որպեսզի նրանք իրենց կարծիքը հայտնեն մինչև այդ փոփոխությունների կատարումը:

3. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը իր սեփական կամ ցանկացած այլ ավիաձեռնարկության առավելություններ չի տրամադրի նման միջազգային օդային հաղորդակցություն իրականացնող մյուս Պայմանավորվող կողմի նկատմամբ՝ մաքսային, ներգաղթային, կարանտինային և նմանօրինակ կանոնների կիրառման կամ իր հսկողության ներքո գտնվող օդանավակայանների, ավիաէթերոլիների, ավիափոխադրումների սպասարկման միջոցների և տեխնիկական միջոցների օգտագործման առումով:

Հոդված 15

Տեղեկության և վիճակագրական տվյալների փոխանակումը

Պայմանավորվող կողմերից մեկի ավիացիոն իշխանությունները մյուս Պայմանավորվող կողմի հարցմամբ պարբերաբար տրամադրում են վիճակագրական տեղեկություն, որը կարող է խելամտորեն պահանջվել պայմանագրային ավիագծերում առաջին Պայմանավորվող կողմի նշանակված ավիաձեռնարկության կողմից կատարվող փոխադրումների ծավալները որոշելու նպատակով:

Հոդված 16 Ուղիղ տարանցում

Պայմանավորվող կողմերից մեկի տարածքով ուղիղ տարանցմամբ անցնող և այդ նպատակի համար հատկացված օդանավակայանի շրջանից չհեռացվող ուղևորները, ուղեբեռը և բեռները կենթարկվեն միայն պարզեցված ստուգման: Ուղիղ տարանցմամբ անցնող ուղեբեռն ու բեռները չեն հարկվի մաքսատուրքերով և նման այլ հարկերով:

Հոդված 17 Խորհրդակցություններ

Սույն Համաձայնագրի կատարմանը վերաբերող բոլոր հարցերով սերտ համագործակցություն ապահովելու համար Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև պարբերաբար կարող են անցկացվել խորհրդակցություններ:

Հոդված 18 Վեճերի լուծում

1. Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման շուրջ Պայմանավորվող կողմերի միջև վեճ առաջանալու դեպքում Պայմանավորվող կողմերը առաջին հերթին կձգտեն այն լուծել Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև ուղղակի բանակցությունների միջոցով:

2. Այն դեպքում, եթե վերոհիշյալ եղանակով հնարավոր չի լինի հասնել կարգավորման, վեճը Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի հարցումով կփոխանցվի երեք արբիտրից բաղկացած դատարանի (այստեղ և այսուհետ՝ արբիտրաժային դատարան) քննությանը, որոնցից երկուսը նշանակվում են Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի կողմից, իսկ երրորդը նշանակվում է երկու արբիտրների կողմից:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ արբիտր նշանակում է մյուսից վեճը արբիտրաժային դատարանում քննելու մասին հարցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում, և երրորդ արբիտրը նշանակվում է հաջորդ 60 (վաթսուն) օրվա ընթացքում: Այն դեպքում, եթե Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրին չհաջողվի նշված ժամանակամիջոցում նշանակել արբիտր, կամ եթե երրորդ արբիտրը չնշանակվի նշված ժամկետում, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության խորհրդի նախագահին՝ արբիտր կամ, կախված հանգամանքներից, արբիտրներ նշանակելու խնդրանքով:

4. 4-րդ կետի դրույթներին համապատասխան նշանակված երրորդ արբիտրը պետք է լինի երրորդ պետության քաղաքացի և կատարի արբիտրաժային դատարանի նախագահի պարտականությունները:

5. Արբիտրաժային դատարանն ինքն է որոշում իր աշխատակարգը:

6. Իրավաբար դատարանի ծախսերը, ներառյալ արբիտրների ծախսերը, Պայմանավորվող կողմերի միջև բաշխվում են հավասար:

7. Պայմանավորվող կողմերը պետք է գործեն դատարանի միջանկյալ կամ վերջնական որոշման համապատասխան:

8. Այնքան ժամանակ, քանի դեռ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը չի կատարի սույն հոդվածի դրույթներին համապատասխան ընդունված արբիտրաժային դատարանի որոշումները, մյուս Պայմանավորվող կողմը կարող է սահմանափակել, դադարեցնել կամ հետ վերցնել այն իրավունքներն ու արտոնությունները, որոնք նա, սույն Համաձայնագրին համապատասխան, տրամադրել է պարտավորությունները չկատարած Պայմանավորվող կողմին:

Հոդված 19

Համաձայնագրի փոփոխությունները

Եթե Պայմանավորվող կողմերից մեկն առաջարկի փոփոխել սույն Համաձայնագրի կամ դրա հավելվածի պայմանները, ապա Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև կանցկացվեն խորհրդակցություններ ենթադրվող փոփոխության վերաբերյալ: Խորհրդակցությունները պետք է սկսվեն դրանց անցկացման մասին հարցման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում, եթե միայն Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունները չպայմանավորվեն այդ ժամանակամիջոցը երկարաձգելու մասին: Համաձայնագրի ուղղումներն ուժի մեջ են մտնում դրանց ընդունման մասին հայտագրերը դիվանագիտական ուղիներով փոխանակելուց հետո: Հավելվածի ուղղումները կարող են ընդունվել Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների համաձայնեցմամբ:

Հոդված 20

Համաձայնագրի գրանցումը

Սույն Համաձայնագիրը և դրա ցանկացած ուղղում Պայմանավորվող կողմերը կգրանցեն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում:

Հոդված 21


Ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է Պայմանավորվող կողմերից մեկի կողմից մյուս Պայմանավորվող կողմի՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու նրա մտադրության մասին գրավոր ծանուցումը ստացվելու օրվանից վեց ամիսը լրանալուց հետո:

Կատարված է Բիշկեկ քաղաքում 2002 թվականի ապրիլի 4-ին՝
երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղրղզերեն և ռուսերեն, ընդ
որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի
դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ ծագելու
դեպքում Պայմանավորվող կողմերը կդեկլարվեն ռուսերեն տեքստով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝



Ղրղզստանի Հանրապետության
կառավարության կողմից՝

